ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

Գնահատող հանձնաժողովի նիստ « ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/41» ծածկագրով ընթացակարգի գնահատման վերաբերյալ

Ք. Երևան

20 հունիսի 2018թ
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Մելքոնյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Կիրակոսյան, Կ. Քարտաշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Հովհաննիսյան

1. 2018թ. հունիսի 13 ժամը 12:00-ին «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/41» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի N2 արձանագրությամբ՝ NN 1, 2 չափաբաժինների մասով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից էր ճանաչվել՝ «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն, որի վերաբերյալ կատարվել է հարցում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն կարգով սահմանված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը և միևնույն ժամանակ առաջարկել էր երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված փաստաթղթերը:

2. «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացրել է հրավերով սահմանված փաստաթղթերը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացվել է հարցման պատասխանը, որն ուսումնասիրվել է հանձնաժողովի կողմից և համապատասխանում է հրավերի պահանջներին:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԳՀԱՊՁԲ-18/41» ծածկագրով ընթացակարգի NN 1, 2 չափաբաժինների մասով հաղթող՝ ընտրված մասնակից ճանաչել «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊ Ընկերությանը:

3.1 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

3.2 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Վ.Մելքոնյան

Քարտուղար՝ ---------- Հ. Հովհաննիսյան

Գնահատող անդամներ՝

1. ---------- Ա. Կիրակոսյան,

2. ---------- Կ. Քարտաշյան,